Այսպիսով՝ Դատարանը եզրահանգում է, որ պատասխանողի կողմից ներկայացված ապացույցներով չեն հիմնավորվում Պայմանագրի միակողմանի լուծման հիմքում դրված հանգամանքները, որպիսի պայմաններում հայցը հիմնավորված է և ենթակա է բավարարման:

5.3. Դատական ծախսերի բաշխման հարցը: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Հաշվի առնելով հայցը բավարարվելու հանգամանքը՝ Դատարանն արձանագրում է, որ սույն գործով պատասխանողից հօգուտ հայցվորի բռնագանձման ենթակա է 30.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.12, 360-րդ և 362-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. Բավարարել «ԱՐՄՏԵՔՍԻԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ կողմերի միջև 12.05.2023թ. կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-23-22/6-2» ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից միակողմանի լուծելու մասին 26.01.2024թ. որոշումն անվավեր ճանաչելու մասին:

1.1. Անվավեր ճանաչել ՀՀ պաշտպանության նախարարության՝ կողմերի միջև 12.05.2023թ. կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-23-22/6-2» ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից միակողմանի լուծելու մասին 26.01.2024թ. որոշումը:

2. ՀՀ պաշտպանության նախարարությունից հօգուտ «ԱՐՄՏԵՔՍԻԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բռնագանձել 30.000 ՀՀ դրամ նախապես վճարված պետական տուրքի գումար:

Վճիռն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

Վճիռը կամովին չկատարվելու դեպքում այն կկատարվի պարտապանի հաշվին դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով:

ԴԱՏԱՎՈՐ Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԳՈՀԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐ

Վճիռը _____ *թ. մտել է օրինական ուժի մեջ:*